ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

30.11.2018թ. Քաղաքացիական գործ
ք. Երևան թիվ ԵԴ/6756/02/18

ՈՐՈՇՈՒՄ

Թիվ ԵԴ/6756/02/18 քաղաքացիական գործի ընդդատությունը որոշելու մասին

1. Գործի դատավարական նախապատմությունը և հարցի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքները.

Աշոտ և Կիմա Արշակի Միրաբյանները 06.04.2018թ. հայցադիմում են ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ Դատարան) ընդդեմ Արամայիս Դանիելի Օհանյանի՝ հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման պահանջի մասին:

Հայցադիմումում որպես պատասխանողի հասցե նշվել է՝ ՀՀ ԱՆ Նուբարաշեն քրեակատարողական հիմնարկ, ք. Երևան, Նուբարաշենի խճուղի 2:

Դատարանի (դատավոր՝ Ն.Կարապետյան) 09.04.2018թ. որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է այն պատճառաբանությամբ, որ ներկայացված հայցադիմումը չի համապատասխանում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (17.06.1998թ. ընդունված) 87-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի պահանջներին *(հայցադիմումում նշված չեն եղել հայցվորներից յուրաքանչյուրի պահանջն ուղղված պատասխանողին):*

Դատարանի 09.04.2018թ. որոշումը հայցվորների կողմից ստացվել է 10.05.2018թ. և հայցադիմումում առկա թերություններն ուղղելու համար օրենքով սահմանված ժամկետում՝ 14.05.2018թ., հայցադիմումը կրկին ներկայացվել է Դատարան:

14.05.2018թ. հայցադիմումը մակագրվել է դատավոր Ռ. Ներսիսյանին:

Դատարանը, ղեկավարվելով 09.04.2018թ. ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 122-րդ և 127-րդ հոդվածներով, 21.05.2018թ. որոշում է

կայացրել հայցադիմումը վերադարձնելու մասին *(հայցադիմումին կցված չի եղել գործին մասնակցող անձանց թվին համապատասխան հայցադիմումի օրինակը և դրան կից փաստաթղթերի պատճենները):*

Հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումը պատասխանող Ա. Օհանյանին ուղարկվել է ք. Երևան, Նուբարաշենի խճուղի 2 հասցեով, որը ստորագրությամբ ստացվել է Ավակյանի կողմից:

Գործում բացակայում է պատասխանողի կողմից հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումը ստանալու վերաբերյալ որևէ պատշաճ ապացույց:

Հայցվորների կողմից հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումը ստացվել է 06.06.2018թ. և հայցադիմումում առկա թերություններն ուղղելու համար օրենքով սահմանված ժամկետում՝ 07.06.2018թ., հայցադիմումը կրկին ներկայացվել է Դատարան:

07.06.2018թ. հայցադիմումը հանձնվել է դատավոր Ռ. Ներսիսյանին:

Դատարանն արձանագրելով, որ հայցադիմումում պահպանվել են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ և 122-րդ հոդվածների պահանջները՝ 08.06.2018թ. որոշում է կայացրել հայցադիմումը վարույթ ընդունելու մասին:

Միաժամանակ հարկ է նշել, որ 08.06.2018թ. Դատարանի կողմից որոշում է կայացվել հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը մասնակի բավարարելու մասին, և նշված որոշման հիման վրա տրված կատարողական թերթում որպես պարտապան Ա. Օհանյանի հասցե նշվել է ք. Երևան, Նուբարաշենի խճուղի 2, ՀՀ ԱՆ Նուբարաշեն քրեակատարողական հիմնարկ:

Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը, հայցադիմումի և կից փաստաթղթերի պատճենները 09.08.2018թ. պատասխանողին ուղարկվել է ք. Երևան, Նուբարաշենի խճուղի 2 հասցեով, որը 23.08.2018թ. ստացվել է Ավակյանի ստորագրությամբ:

Գործում բացակայում է պատասխանողի կողմից հիշյալ դատավարական փաստաթղթերը ստանալու վերաբերյալ որևէ պատշաճ ապացույց:

27.07.2018թ. Դատարանում ստացվել է ՀՀ ԱՆ «Կոշ» քրեակատարողական հիմնարկի պետի գրությունը, որին կից ներկայացվել է ՀՀ ԱՆ «Կոշ» քրեակատարողական հիմնարկի դատապարտյալ, սույն քաղաքացիական գործով պատասխանող Արամայիս Օհանյանի դիմումը: Նշված դիմումով Ա. Օհանյանի կողմից առարկություններ է ներկայացվել հայցի

ապահովման միջոց կիրառելու մասին Դատարանի կողմից 08.06.2018թ. կայացված որոշման վերաբերյալ:

Դատարանի 11.09.2018թ. որոշմամբ սույն քաղաքացիական գործով նախնական դատական նիստ է նշանակվել 22.10.2018թ.:

Պատասխանող Ա. Օհանյանին դատական ծանուցագիրն ուղարկվել է ՀՀ ԱՆ «Կոշ» քրեակատարողական հիմնարկ, Արագածոտնի մարզ, գ. Կոշ հասցեով, որը ստորագրությամբ ստացվել է 01.10.2018թ.:

08.10.2018թ. Դատարանում ստացվել է ՀՀ ԱՆ «Կոշ» քրեակատարողական հիմնարկի պետի գրությունը, որին կից ներկայացված փաստաթղթով պատասխանող Արամայիս Օհանյանն իր ստորագրությամբ հավաստել է դատական ծանուցագիրը ստանալու փաստը:

16.10.2018թ. Դատարանում ստացվել է ՀՀ ԱՆ «Կոշ» քրեակատարողական հիմնարկի պետի գրությունը, որին կից ներկայացված դիմումով պատասխանող Արամայիս Օհանյանը խնդրել է ապահովել իր ներկայությունը կայանալիք դատական նիստին:

18.10.2018թ. Դատարանում ստացվել է պատասխանող Ա. Օհանյանի ներկայացուցիչ Հ. Գալստյանի միջնորդությունն առ այն, որ պատասխանող Ա. Օհանյանը 2017 թվականի օգոստոսի 16-ից պատիժը կրում է ՀՀ ԱՆ «Կոշ» քրեակատարողական հիմնարկում, որը գտնվում է Արագածոտնի մարզի Կոշ գյուղի 1-ին փողոց, թիվ 56 հասցեում:

Պատասխանողի ներկայացուցիչը նշել է, որ սույն քաղաքացիական գործի քննությունը պետք է շարունակվի ՀՀ Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում, քանի որ հայց հարուցելու օրվա դրությամբ պատասխանող Արամայիս Օհանյանը գտնվել է ՀՀ Արագածոտնի մարզում, և բացի այդ, Արամայիս Օհանյանը ցանկանում է, որպեսզի ներկա գտնվի գործի քննությանը, իսկ տեղափոխման հետ կապված առավել նպատակահարմար է գործի քննությունն իրականացնել քրեակատարողական հիմնարկին մոտ գտնվող դատարանում:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի կանոններով՝ պատասխանողի ներկայացուցիչը միջնորդել է թիվ ԵԴ/6756/02/18 քաղաքացիական գործը հանձնել ՀՀ Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քննությանը:

22.10.2018թ. նշանակված դատական նիստի արձանագրության համաձայն՝ դատական նիստին ներկայացել են հայցվորները:

Դատարանի կողմից 22.10.2018թ. որոշում է կայացվել պատասխանողի ներկայացուցչի միջնորդությունը բավարարելու և քաղաքացիական գործը ՀՀ Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քննությանը հանձնելու մասին:

Դատարանը միջնորդության բավարարման հիմքում դրել է հետևյալ փաստական և իրավական հիմնավորումը.

«Պատասխանողի ներկայացուցիչը դատարան մուտքագրված միջնորդությամբ խնդրել է գործը հանձնել Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան, քանի որ հայց հարուցելիս, պատասխանողը գտնվել է Արագածոտնի մարզում: Վերջինս ցանկանում է ներկա գտնվել դատական նիստերին և հաշվի առնելով, որ գտնվում է քրեակատարողական հիմնարկում, տեղափոխմանը ավելի նպատակահարմար:

Համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25 հոդվածի՝ 1. Դատարանը տարածքային ընդդատության կանոնների պահպանմամբ իր վարույթ ընդունած գործը պետք է քննի ըստ էության, թեկուզև այն հետագայում դարձել է ընդդատյա այլ դատարանի: Դատարանը գործը հանձնում է այլ դատարանի քննությանը, եթե գործը քննելիս պարզվել է, որ այն վարույթ է ընդունվել սույն օրենսգրքի 24-րդ կամ 138-րդ հոդվածով սահմանված կանոնների խախտմամբ: Դատարանը գործը հանձնում է սնանկության դատարանի քննությանը, եթե գործը քննելիս պարզվել է, որ այն ենթակա է քննության սնանկության դատարանում: Սույն օրենսգրքի 21-րդ կամ 22-րդ հոդվածով սահմանված ընդդատության կանոնների խախտմամբ վարույթ ընդունված գործը հանձնվում է այլ դատարանի քննությանը, եթե պատասխանողը մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելն առարկում է գործը տվյալ դատարանում քննելու վերաբերյալ: Գործն այլ դատարանի քննությանը հանձնելու մասին կայացվում է որոշում:»:

Դատարանի աշխատակազմի 25.10.2018թ. թիվ ԴԴ-9.1-Ե-198955/18 գրությամբ թիվ ԵԴ/6756/02/18 քաղաքացիական գործն ուղարկվել է ՀՀ Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

02.11.2018թ. քաղաքացիական գործը մակագրվել է ՀՀ Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Մ. Մարգարյանին:

Դատավոր Մ. Մարգարյանի կողմից 13.11.2018թ. որոշում է կայացվել թիվ ԵԴ/6756/02/18 քաղաքացիական գործն ուղարկել ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահին՝

տարածքային ընդդատության հարցը որոշելու համար:

Դատավոր Մ. Մարգարյանի կողմից կայացված որոշման հիմքում դրված է հետևյալ պատճառաբանությունը.

«Դատարանը համաձայն չլինելով գործի տարածքային ընդդատությանը, գտնում է, որ գործը պետք է ուղարկվի ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահին, հետևյալ պատճառաբանությամբ, պատասխանողի հաշվառման վայրը ք. Երևան, Նուբարաշենի խճուղի 2, «Կոշ» ՔԿՀ-ում նրա գտնվելու ժամկետը որոշված է մի դատական ակտով, որը գործում բացակայում է, ուստի «Կոշ» ՔԿՀ-ն չպետք է համարվի պատասխանողի գտնվելու վայր:»:

<u>2. Կիրառելի իրավական նորմերը, պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 21-րդ հոդվածի համաձայն՝ հայցը ներկայացվում է պատասխանողի հաշվառման (գտնվելու) վայրի, իսկ քաղաքացու՝ հաշվառման վայր չունենալու դեպքում՝ բնակության վերջին հայտնի վայրի առաջին ատյանի դատարան, եթե այլ բան սահմանված չէ սույն օրենսգրքով կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

Օրենսգրքի 22-րդ հոդվածը սահմանում է քաղաքացիական գործերի այլընտրանքային ընդդատության կանոնները: Ի թիվս այլ դեպքերի, հիշյալ հոդվածի 2-րդ մասով սահմանվել է, որ պատասխանողի դեմ, որը չունի հաշվառման վայր, և որի վերջին բնակության վայրն անհայտ է, հայց կարող է ներկայացվել նրա գույքի գտնվելու վայրի դատարան: Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ առողջությանը, պատվին, արժանապատվությանը, գործարար համբավին կամ կերակրողի մահվամբ պատճառված վնասի հատուցման վերաբերյալ հայցը կարող է ներկայացվել հայցվորի հաշվառման (գտնվելու) վայրի առաջին ատյանի դատարան կամ վնասը պատճառելու վայրի դատարան:

Օրենսգրքի 25-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ սույն օրենսգրքի 21-րդ կամ 22-րդ հոդվածով սահմանված ընդդատության կանոնների խախտմամբ վարույթ ընդունված գործը հանձնվում է այլ դատարանի քննությանը, եթե պատասխանողը մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելն առարկում է գործը տվյալ դատարանում քննելու վերաբերյալ:

Վերը նշված իրավական նորմերի վերլուծությունից հետևում է, որ քաղաքացիական

գործերի տարածքային ընդդատության ընդհանուր կանոնն այն է, որ հայցը պետք է ներկայացվի պատասխանողի հաշվառման (գտնվելու) վայրի դատարան: Ընդ որում, օրենսդիրը սահմանել է նաև, որ քաղաքացու՝ հաշվառման վայր չունենալու դեպքում հայցադիմումը կարող է ներկայացվել պատասխանողի բնակության վերջին հայտնի վայրի դատարան:

Նշված ընդհանուր կանոնից բացառությունները սահմանված են Օրենսգրքի 22-րդ, 23-րդ և 24-րդ հոդվածներով և վերաբերում են այլընտրանքային, պայմանագրային և բացառիկ տարածքային ընդդատությանը:

Հայցադիմումը վարույթ ընդունելիս, ի թիվս այլ հանգամանքների, դատարանը պետք է պարզի արդյոք ներկայացված հայցադիմումում պահպանվել են Օրենսգրքով սահմանված ընդդատության կանոնները, և միայն այդպիսիք պահպանված լինելու դեպքում որոշում կայացնի հայցադիմումը վարույթ ընդունելու մասին:

Այդուհանդերձ, եթե դատարանը գործը քննելիս պարզում է, որ այն վարույթ է ընդունվել Օրենսգրքի 21-րդ և 22-րդ հոդվածներով սահմանված ընդդատության կանոնների խախտմամբ, ապա այդ գործը պետք է հանձնի այլ դատարանի քննությանը, եթե մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը, առկա է պատասխանողի առարկությունը՝ գործը տվյալ դատարանում քննելու վերաբերյալ:

Միաժամանակ հարկ է նշել, որ վերը նշված հիմքով գործն այլ դատարանի քննությանը, ինչպես նաև ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահին՝ գործի ընդդատությունը որոշելու հարցը լուծելու համար, կարող է հանձնվել այն դեպքում, երբ գործի փաստական հանգամանքները թույլ են տալիս փաստելու, որ գործը վարույթ է ընդունվել Օրենսգրքի 21-րդ և 22-րդ հոդվածներով սահմանված ընդդատության կանոնների խախտմամբ: Այսինքն՝ գործում առկա փաստական տվյալներն ու ապացույցները պետք է աներկբայելիորեն վկայեն այն մասին, որ գործն ի սկզբանե վարույթ է ընդունվել ընդդատության կանոնների խախտմամբ:

Օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործն ըստ տարածքային ընդդատության ստացած դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում այն վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի տարածքային ընդդատությանը:

Նշված իրավական նորմի վերլուծությունից հետևում է, որ գործը տարածքային

ընդդատությամբ ստացած դատարանը յոթնօրյա ժամկետում կայացնում է հետևյալ որոշումներից մեկը.

- գործը վարույթ ընդունելու մասին,
- գործի տարածքային ընդդատությանը համաձայն չլինելու դեպքում՝ գործը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին:

Երկու դեպքում էլ Դատարանը պարտավոր է տալ որոշման իրավական հիմնավորումը, քանի որ Վճռաբեկ դատարանի նախագահին դիմելու համար հիմք կարող է հանդիսանալ ոչ թե ցանկացած, այլ միայն փաստարկված և գործում առկա ապացույցներով հիմնավորված անհամաձայնությունը:

Նշվածը հիմնավորվում է ոչ միայն այն հանգամանքով, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ որոշման իրավական հիմնավորումը, այլ նաև այն հանգամանքով, որ «վճռաբեկ դատարանի նախագահի կողմից նշված լիազորությունն իրականացնելու համար ևս անհրաժեշտ է, որ դատավորների կողմից կայացվող որոշումները լինեն հիմնավորված, փաստական հանգամանքները՝ ապացույցներով հաստատված, քանի որ վճռաբեկ դատարանի նախագահը կոնկրետ գործով իրավասու դատարանը պետք է որոշի գործով հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ Օրենսգրքի՝ ընդդատությունը կարգավորող նորմերի ընտրության և կիրառման միջոցով:

Բացի այդ, վերը նշվածը կարևորվում է ինչպես գործերի ողջամիտ ժամկետում քննության կոնվենցիոն պահանջի ապահովման տեսանկյունից, այնպես էլ անձի դատական պաշտպանության իրավունքի պատշաճ ապահովման տեսանկյունից:

Այս առումով հարկ է նշել նաև, որ ՀՀ սահմանադրական դատարանը 03.02.2009 թվականի թիվ ՍԴՈ-787 որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ դատական պաշտպանության իրավունքի բաղկացուցիչ տարրն է անձի՝ այն դատարանում իր գործի քննության իրավունքը, որի ընդդատությանն օրենքով հանձնված է տվյալ գործը:

Տվյալ դեպքում, ՀՀ Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Մ. Մարգարյանը 13.11.2018թ. որոշում է կայացրել թիվ ԵԴ/6756/02/18 քաղաքացիական գործը ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին՝ տարածքային ընդդատության հարցը լուծելու համար: Որոշման հիմքում դրվել է այն

պատճառաբանությունը, որ «պատասխանողի հաշվառման վայրը ք. Երևան, Նուբարաշենի խճուղի 2, «Կոշ» ՔԿՀ-ում նրա գտնվելու ժամկետը որոշված է մի դատական ակտով, որը գործում բացակայում է, ուստի «Կոշ» ՔԿՀ-ն չպետք է համարվի պատասխանողի գտնվելու վայր»:

Նախ հարկ է նշել, որ դատավոր Մ. Մարգարյանի կողմից թիվ ԵԴ/6756/02/18 քաղաքացիական գործով 13.11.2018թ. կայացված որոշմամբ չի հիմնավորվել հիշյալ քաղաքացիական գործը ՀՀ Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին ընդդատյա չլինելու հանգամանքը, այլ, ըստ էության, անհամաձայնություն է հայտնվել դատավոր Ռ. Ներսիսյանի կողմից գործը տարածքային ընդդատությամբ հանձնելու մասին կայացված որոշման հիմնավորվածության վերաբերյալ:

Թիվ ԵԴ/6756/02/18 քաղաքացիական գործում առկա են պատասխանող Ա. Օհանյանի ՀՀ ԱՆ «Կոշ» քրեակատարողական հիմնարկում գտնվելու փաստը հավաստող հետևյալ փաստաթղթերը.

1. 27.07.2018թ. Դատարանում ստացվել է ՀՀ ԱՆ «Կոշ» քրեակատարողական հիմնարկի պետի գրությունը, որին կից ներկայացվել է ՀՀ ԱՆ «Կոշ» քրեակատարողական հիմնարկի դատապարտյալ, սույն քաղաքացիական գործով պատասխանող Արամայիս Օհանյանի դիմումը,

2. Պատասխանող Ա. Օհանյանին դատական ծանուցագիրն ուղարկվել է ՀՀ ԱՆ «Կոշ» քրեակատարողական հիմնարկ, Արագածոտնի մարզ, գ. Կոշ հասցեով, որը ստորագրությամբ ստացվել է 01.10.2018թ.: 08.10.2018թ. Դատարանում ստացվել է ՀՀ ԱՆ «Կոշ» քրեակատարողական հիմնարկի պետի գրությունը, որին կից ներկայացված փաստաթղթով պատասխանող Արամայիս Օհանյանն իր ստորագրությամբ հավաստել է դատական ծանուցագիրը ստանալու փաստը:

3. 16.10.2018թ. Դատարանում ստացվել է ՀՀ ԱՆ «Կոշ» քրեակատարողական հիմնարկի պետի գրությունը, որին կից ներկայացված դիմումով պատասխանող Արամայիս Օհանյանը խնդրել է ապահովել իր ներկայությունը կայանալիք դատական նիստին:

4. 18.10.2018թ. Դատարանում ստացվել է պատասխանող Ա. Օհանյանի ներկայացուցիչ Հ. Գալստյանի միջնորդությունն առ այն, որ պատասխանող Ա. Օհանյանը 2017 թվականի օգոստոսի 16-ից պատիժը կրում է ՀՀ ԱՆ «Կոշ» քրեակատարողական հիմնարկում, որը գտնվում է Արագածոտնի մարզի Կոշ գյուղի 1-ին փողոց, թիվ 56 հասցեում:

Վերը նշված 1-ից 3-րդ կետերում նշված փաստաթղթերը և դրանցում պարունակող տեղեկատվությունը հնարավորություն չեն ընձեռում հանգել այն հետևությանը, որ պատասխանողը սույն գործով հայցադիմումը վարույթ ընդունելու պահին գտնվել է ՀՀ ԱՆ «Կոշ» քրեակատարողական հիմնարկում, թե՝ ոչ:

Այնուհանդերձ, վերը նշված փաստաթղթերից թիվ ԵԴ/6756/02/18 քաղաքացիական գործի ընդդատության հարցը որոշելու համար անհրաժեշտ տեղեկատվություն պարունակող և գործում առկա միակ փաստաթուղթը պատասխանողի ներկայացուցչի կողմից ներկայացված միջնորդությունն է, համաձայն որի՝ ***պատասխանող Ա. Օհանյանը 2017 թվականի օգոստոսի 16-ից*** պատիժը կրում է ՀՀ ԱՆ «Կոշ» քրեակատարողական հիմնարկում, որը գտնվում է Արագածոտնի մարզի Կոշ գյուղի 1-ին փողոց, թիվ 56 հասցեում:

Ընդ որում, նշված փաստաթղթի բովանդակությունը հերքող տեղեկատվություն պարունակող որևէ ապացույց գործում առկա չէ:

Բացի այդ, գործում առկա ապացույցներով հիմնավորվում է այն հանգամանքը, որ պատասխանող Ա. Օհանյանին «Նուբարաշեն» ՔԿՀ-ի հասցեով ուղարկված դատավարական փաստաթղթերը վերջինիս կողմից չեն ստացվել, միևնույն ժամանակ հիմնավորվում է այն հանգամանքը, որ դրանք ստացվել են «Կոշ» ՔԿՀ-ի հասցեով, իսկ պատասխանող Ա. Օհանյանի՝ Դատարանին հասցեագրված փաստաթղթերն առաքվել են «Կոշ» ՔԿՀ-ից:

Վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները թույլ են տալիս եզրակացնել, որ սույն քաղաքացիական գործն ընդդատյա է ՀՀ Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

Ղեկավարվելով Օրենսգրքի 26-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Թիվ ԵԴ/6756/02/18 քաղաքացիական գործն ընդդատյա է ՀՀ Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

ԵՐՎԱՆԴ ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ